

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻՑ

Իրաք

ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Սույն թվականի հունվարի մեկին, «Խաղաղության օր»-վա առթիվ, Բաղդադի իսլամ և քրիստոնյա համայնքների բազմաթիվ ներկայացուցիչներ իրենց կրոնական պետերով համախմբվել են տեղի քաղդեացիների կրոնական կենտրոնի ընդարձակ սրահում՝ միասնաբար իրենց աղոթքը մատուցելու առ Աստված՝ վասն խաղաղության աշխարհի:

Սույն արարողությանը իր մասնակցությունն է բերել նաև տեղի հայ առաքելական եկեղեցին:

Համատեղ աղոթքին ներկա լինելու համար հրավիրվել են զանազան երկրների դիվանագիտական ներկայացուցիչներ:

Արարողության ընթացքում զանազան լեզուներով ընթերցվել են խաղաղությանը նվիրված համապատասխան հատվածներ Ավետարանից և Ղուրանից: Այնուհետև կարդացվել է Պողոս Զ Պապի պատգամը՝ նվիրված «Խաղաղության օր»-վան:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ «ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՕՐ»-ՎԱՆ

Բաղդադի քաղդեացիների կրոնական կենտրոնի սրահում հունվարի 26-ին տեղի է ունեցել Էկումենիկ հանդիսություն՝ նվիրված «Միութենական օր»-վան:

Հանդիսությանը ներկա են եղել տեղի գրեթե բոլոր քրիստոնյա համայնքների ներկայացուցիչները, դիվանագետներ և ժողովրդի հոծ բազմություն:

Հանդիսության ծրագրին իրենց մասնակցությունն են բերել զանազան համայնքների ներկայացուցիչները ուղերձներով, ընթերցումներով կամ երգեցողությամբ: Տարբեր լեզուներով կարդացվել են միության գաղափարն արտահայտող հատվածներ Ավետարաններից, առաքելական թղթերից և սաղմոսներից:

Բաղդադի հայ եկեղեցու դպրաց դասի կատարմամբ երգվել են «Սուրբ, սուրբ»-ը և «Հայր-մեր»-ը, որոնք խոր տպավորություն են թողել ներկաների վրա:

Այնուհետև քրիստոնյաների միության գաղափարին նվիրված անգլերեն տպավորիչ մի ճառով հանդես է եկել Իրաքի պապական նվիրակ մոնսենյոր Ժան Ռյուպը:

Հանդիսությունը փակվել է քաղդեացիների Պատրիարք Տ. Պուլուս Շեհոյի օրհնության աղոթքով:

ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՈԹՔ

Մարտի 2-ին Բաղդադի հայ առաքելական առաջնորդանիստ եկեղեցում Իրաքի քրիստոնյա կանանց կազմակերպության նախաձեռնությամբ տեղի է ունեցել միջհամայնքային հասարակաց աղոթք, որին ներ-

կա են եղել համայնքների հոգևոր պետերը, մտավորականության ներկայացուցիչներ և ժողովրդի հոծ բազմություն:

Հանդիսությունը բաց է արել Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը անգլերեն ողջույնի խոսքով: Այնուհետև արաբերեն, ասորերեն, հայերեն և ֆրանսերեն լեզուներով հատվածներ են կարդացվել Ավետարանից:

Հավաքական աղոթքի տեքստը, որը կազմված է եղել արաբերեն լեզվով, մեջ ընդ մեջ արտասանվել է ժողովրդի կողմից:

Հանդիսության ընթացքում հայ եկեղեցու դպրաց դասի կատարումով հնչել են արաբական, ասորական և հայկական հոգևոր երգեր:

Այնուհետև կրոնական հոգեշունչ մի ճառով հանդես է եկել ասորական ուղղափառ եկեղեցու առաջնորդ տ. Զաքքա եպիսկոպոսը:

Միջհամայնքային հասարակաց աղոթքի սույն հանդիսությունը փակվել է Իրաքի լատին եկեղեցու առաջնորդ տ. Էռնեստ Նիարի եպիսկոպոսի օրհնության խոսքով: